

Գ Ա Ւ Բ Ա

(Պարուկական վիճակախաղ)

Սովորութիւնների և խաղերի մէջ կան այնպիսիները, ուրոնք մեծ ազգեցութիւն են ունեցել ազգերի մասնաւոր գտատիրաբակութեան գործում. այդ սովորութիւնների շուրջը և նրանց ընոյթը պատճառ է եղել ժողովրդական գեղեցիկ բանահիւսութեան ու այլ ստեղծագործութիւնների: Ահա այդպիսի խաղերից մէկն է վիճակախաղը, որի շուրջը ստեղծւել է մեր ջանգիւլումներից և լէլէններից չատերը, որոնք մեծ մասամբ ժողովրդական մտքի և զգացմունքի գեղեցիկ արգասիքներ են:

Այս վիճակախաղի ծագումն և զարգացումը ուսումնասիրելուն նպաստելու յուսով ես ցանկանում եմ նկարագրել պարսկական դաւրան, որ միանդամայն նման է սրան, և որ մինչեւ այժմ մնացել է հարաւարելեան Պարուկաստանի մահմեդական և զրադաշտական պարսիկների մէջ:

Սա տեղի է ունենում այսպէս: Ամեն տարի Սաֆար ամսի 26-ին (ապրիլի 27-ին) ջանէլ կանայք և աղջկերքը հաւաքւում են մի տեղ, իրենց ընկերունինների հետ Դուրս խաղալու. ուր նրանցից մէկը վերցնում է մի կաւէ պտուկ (պուլիկ), որին պարսիկները գուրա են ասում և պտըտեցնում է ներկայ եղողների մէջ ու ամեն մէկից միջականանութեան համար հաւաքում է նշաններ,—որին ասում են Մարա, —այդ մարաները լինում են՝ կոճակ, հլունք, մատանի, ականջի օդ, մի խօսքով այդպիսի իրեր—այդ իրերը Դուրայի մէջ լցնելու պատճառով էլ խաղը կոչում է նոյն անունով. ապա մարաներով լի Դուրան դնում են այդու ծառերի կամ խոտերի տակ, ուր մնում է մինչև հետեւնալ օրը՝ այն է Սաֆար ամսի 24-ը. այդ օրն է տեղի ունենում խսկական խաղը: Հաւաքւում են խաղունները միասին, ուր բերւում է Դուրան. ապա կապում են խաղացողներից նրա աչքերը, որը աւելի շատ գիտէ ժողովրդական խաղեր ու երգեր և նստեցնում են մէջ տեղը. դրանից յետոյ կապում են մի երկրորդի աչքերը ևս, որի ձեռքը տայիս են վիճակահանութեան համար հաւաքւած մարաների դուրան. վերջինս հանում է պտուկից մարաները մէկ-մէկ ու բռան մէջ հուպ տւած պահում և գտանում երգչին. «այս մարայի բաղդասաւած ասա»: Այսպէս ասած՝ գուշակը արտասանում է մի ոտանաւոր այդ մուրայի բաղդին և երբ վերջացնում է՝ հրաւիրում է տիրոջը վեր-

յնել իր մարան և այդպէս շարունակ մինչև վերջացնում է բոլոր մարանները: Խիստ հետաքրքիր է թէ ինչպէս են լաց լինում, արցոնք թափում կամ թէ ուրախ ծիծաղում և հրճում այդ նախապաշարուած խեղճերը, իրենց բաղդի երգը լսելուց յիշոյ:

Այժմ կը բերեմ այսանեղ այդ խաղի ժամանակի արտասանաւած ուսանաւորներից մի բանիսը, թէ պարսկերէն և թէ հայերէն թարգմանութիւնը (չը նայած որ թարգմանութիւնը անհարթ է և բնագրի քաղցրութիւնից շատ հեռու), որոնք իրենց բովանդակութեամբ շատ նման են մեր ջանն-զիւլումի ուսանաւորներին: Դրանց մէջ կան այնպիսինները, որոնք պարծանք կարող են գառնալ շատ բանաստեղծների երկերում: Այս օրինակներն, որ բերում եմ, գրւած են Քերմանի բարրառով:

Թուեր զօլ վելամ վիշխտա դիղամ

Բէ շիրինի եարամ հէջ քի նա զիղամ

Բէ շիրինի վելամ հիւրի-ֆէրի բուդ

Նգաղարչ Ամիր-Էլ-Մամին^{*)} բուդ:

Սիրունու վարդ երեսը ծածկւած տեսայ,

Եարիս պէս քաղցր ոչ որ չը տեսայ.

Անուշիկ եարս հիւրի-ֆէրի էր,

Իսկ պահապանը՝ Ամիր-Էլ-Մամինն էր:

Բը փոշտը բաղ դիդամ մահը նովրա,

Զաղամ դամչի սալ գամ ջովրա,

Բա ումսուզը Մուզա-Շահը մարգում

Միհանը սադ ջիւուն բորգամ գիրովրա:

Պարտիզի յիշուը տեսայ նորալուսնին

Մտրակով խփեցի և ընկայ առաջ.

Մարդկանց Տէր-Աստւածը վկայ՝

Որ հարիւր ջահէլի մէջ տարայ գրաւը:

Ողին բալա միհեա, ֆէլ-ֆէլ մուլուսա,

Լրունա զանչա քոն թամամ բէ բուսամ.

Լրունա զոնչա քոն չալմտ ֆիեալա

Ֆինալա մէյ բուըն թամամ բէնուշամ:

Են վիրիցն արի, սիրուն եար իմ,

Շրթներդ փունջ արա՝ որ լրիւ պակնեմ,

Շրթներդ փունջ արա, աչքդ ֆիեալա

Ֆիեալան գինի լեցրու, որ ամբողջ խմեմ:

*) Ամիր-Էլ-Մամինը — Մուհամմէդի հօրեղբօր որդի միենալու ժամանակ և նրա աղջիկ Ֆաթմայի ամուսին Ալին է, որին Շիա մահմէդականները առաջին խալիֆ են համարում և ատիկն Ամիր-Էլ-Մամին ախտղոսը:

Լարը բուն ուժադի չարղաթ թլա՛ի

Սար-գարդան բը աշուղ մի նուսայի

իլահի մաղարտ Փեր բէ միքաւի

Թռ բէյքաս միշաւի ոռու վար սանայի:

Շրթներդ գունաւորւել են ոսկեգոյն շղարշաւոր,

Սիրահարուածի ես նոման ոտքից ց'կլուխ,

Երանի թէ պառա մայրդ մեռնի:

Դու անտէր մնաս ու երեսդ դէպի ինձ գաս:

Միւխնը քունը դարուն դարեայը արա,

Վոլը մա ոռուել մաթար բէ խարա.

Բիեարին նէյ, շքար բըմաղզը բաղուս

Խորաքը գէլբարամ հար շար գօլարա:

Դաւրուն *) լեռան այն կողմը ծովն է ջրերով,

Սիրեկանս անքուն է լուսնեակ երեսով.

Բերէք նւագ, շաբարը նշով

Ամեն իրիկուն սիրելիս մնաւում է վարդի ջրերով:

Ի՞ն եարը մա հասա քի մի քունատ արդարի

Սար թու սար բիլտ բէքշամ մորվարի

Սար թու սար բէքշամ թլայ մորվարի

Ի՞ն ջւուն եարմ աստ քի մի քունատ արդարի

Նա իմ եարն է, որ ջրում է (արտը) արտը կամ ալգին է ջրում:

Մայրէ ի ճայր բահնդ ծածկեմ մարզարիտներով,

Մայրէ ծոյր ծածկեմ բահնդ ոսկով, մարզարոսով.

Նա իմ ջիւան եարն է՝ որ ջրում է (արտը):

Բը մէյդունը բոլանդ գեաշտամ չափ ու սաստ

Միեանը սաթ ջիւան դէլմ թորա խաստ.

Միեանը սաթ ջիւան շադտ նա քեարդի:

Բը դո անգուշտ քաղզ եազտ նա քեարդի:

Մեծ հրապարակով շրջեցի տջ ու ձախ,

Հարիւր երիտասարդի մէջ սիրսս քիզ կողաւ.

Հարիւր երիտասարդի մէջ ինձ չը խոճացիր՝

Երկու մատ հստակով ինձ չուրախացրիր:

Մգար շահնը շումա բաղզ գերուն տատ.

Մորաքեար գար դալամդոն զաֆարուն տատ

Ագեար դալամ նա բուղ—բա չուղը ֆէլ-ֆէլ,

Ագեար բաղզ նա բուղ—բա ֆարդէլը դէլ:

Մբթէ ձեր քաղաքում թուղթը շառ թանգ է,

Թանաքը գրչամանում զաֆարուն է դառել.

Եթէ գրիչ չը կար—պղպիղի ցօղունով գրէիր,

Եթէ թուղթ չը կար—սրաի վարակոյրի վրա գրէիր:

ՍԱՐ-ՑՈՎ.

*) Դաւրունը արէ որ գանւում է Քերմանի նահանգում: